



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''23'' սեպտեմբեր 2013 թ.

թիվ 42 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել՝

ՀՀ 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում «Հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրը»՝ համաձայն հավելվածի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2013 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 42-Ա որոշման

ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական
համատարած հաշվառում

Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ
ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ

Մարզ-----Տարածաշրջան-----

Համայնք-----Բնակավայր-----

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ N-----

Հաշվառման տեղամասի վարիչ

(Ազգանուն, անուն, հայրանուն)

Հաշվառման տեղամասի վարիչի օգնական

(Ազգանուն, անուն, հայրանուն)

Հաշվառման տեղամասի հասցեն-----

-----Հեռախոսի համարներ-----

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի հասցեն-----

Հեռախոսի համարներ-----

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության ապրիլի 25-ի թիվ 402-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի **նոյեմբերի 10-30-ը** ներառյալ պետք է անցկացվի փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում:

Փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ փորձնական ԳՀՀ) անցկացման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար ՀՀ Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզերի համապատասխան տարածքներում, համաձայն տվյալ մարզի համար հաստատված ՀՀ 2013թ. փորձնական ԳՀՀ նախապատրաստման և անցկացման **կազմակերպական պլանների**, կազմավորվում են **հաշվառման տեղամասեր**: Հաշվառման տեղամասերում աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու համար նշանակվում են հաշվառման տեղամասերի վարիչներ և հաշվառման տեղամասերի վարիչների օգնականներ:

Հաշվառման տեղամասի վարիչը և նրա օգնականը իրենց աշխատանքի ընթացքում ղեկավարվում են «Պետական վիճակագրության մասին» և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից 2013թ. օգոստոսի 7-ի թիվ 25-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթը և դրա հավելվածը լրացնելու հրահանգով», ինչպես նաև կազմակերպչական գործընթացները կանոնակարգող համապատասխան այլ փաստաթղթերով:

«Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին օրենսդրությունը խախտելու համար սահմանված է.

«Տիգիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ անհատական տվյալներին տիրապետող լիազոր մարմնի աշխատակիցներին (այսուհետ՝ աշխատակիցներ) արգելվում է այլ անձի (անձանց) հաղորդել **գյուղատնտեսական հաշվառման լրացված փաստաթղթերի բովանդակությունը**: Գյուղատնտեսական հաշվառման սկզբնական (անհատական) տվյալների օգտագործման կարգի խախտման, հարցաթերթը ոչ ամբողջական, սխալ տվյալներով լրացնելու դեպքում գյուղատնտեսական հաշվառման աշխատակիցները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Գյուղատնտեսական հաշվառման սկզբնական (անհատական) նյութերը (այդ թվում՝ տվյալները) դատական, դատաքննչական և այլ մարմինները որպես ապացույց չեն կարող օգտագործել:

Գյուղատնտեսական հաշվառման հարցաթերթի հարցերին պատասխանելուց հրաժարվելը, ոչ ամբողջական, սխալ տվյալներ ներկայացնելն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով»:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հաշվառման տեղամասի վարիչը և նրա օգնականը համաձայն «ՀՀ 2013թ. (նոյեմբերի 10-30-ը ներառյալ) փորձնական գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստմանը, անցկացմանը, նյութերի մեքենայական մշակմանը և ելքային աղյուսակների ստացմանն ուղղված միջոցառումների» *պատասխանատու են իրենց տեղամասում.*

- փորձնական ԳՀՀ նախապատրաստական և կազմակերպական աշխատանքների ժամանակին և որակով կազմակերպման և իրականացման,
- փորձնական ԳՀՀ բոլոր փաստաթղթերի ամբողջական և սահմանված կարգով լրացման,
- հրահանգիչ-հսկիչներից փորձնական ԳՀՀ ժամանակ հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների կողմից լրացված նյութերի ընդունման,
- փորձնական ԳՀՀ ժամանակ հավաքագրված նյութերը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) տարածքային բաժնի պատասխանատու անձանց հանձնելու համար:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԸ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԸ Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ե Ն.

1. Մասնակցել ուսուցման (հրահանգավորման) դասընթացներին և անցնել պատրաստվածության ստուգում:

2. Մասնակցել իրենց հաշվառման տեղամասի հրահանգիչ-հսկիչների ուսուցման (հրահանգավորման) դասընթացներին ու պատրաստվածության ստուգմանը:

3. Իրականացնել իրենց հաշվառման տեղամասի հաշվարարների ուսուցումը (հրահանգավորումը) և իրականացնել նրանց պատրաստվածության ստուգում:

4. Մասնակցել բնակչության և գործարարության շրջանում փորձնական ԳՀՀ իրազեկման աշխատանքներին:

5. Լրացնել «Հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրի» 1-ին աղյուսակը:

6. Ծանոթանալ իրենց հաշվառման տեղամասի սահմաններին, այդ ընթացքում առաջացած հարցերը քննարկել ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում տարածքային բաժնի պատասխանատու անձի կամ փորձնական ԳՀՀ աշխատանքները մարզերում համակարգողի հետ (այսուհետ՝ համակարգող):

7. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձի և համակարգողի հետ միասին, փորձնական ԳՀՀ կազմակերպական պլանի համաձայն, հրահանգիչ-հսկիչներին ծանոթացնել իրենց հրահանգչական տեղամասերի սահմաններին:

8. Հրահանգչական տեղամասի սահմանների ճշտման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել թաղամասից (գանգվածից) դուրս գտնվող տներին, մեկուսացած շենքերին, ոչ բնակելի տներին (շինություններին), որտեղ կարող է ապրել տնտեսություն: Դրանք պետք է գրանցել համապատասխան հրահանգչական տեղամասում: Անհրաժեշտ է հետևել, որ ոչ մի բնակավայր դուրս չմնա այս կամ այն հրահանգչական տեղամասից, չլինեն հիմնական թաղամասից (գանգվածից) ձորակներով, անտառակներով և նմանատիպ այլ դժվարանցանելի խոչընդոտներով անջատված տների (շինություններին) բացթողումներ: Որևէ բնակավայրում տների բացթողումներ հայտնաբերելու դեպքում, դրանք պետք է գրանցել համապատասխան հրահանգչական տեղամասում:

9. Հաշվառման տեղամասում շրջագայելով՝ անցկացնել համայնքներում տնտեսությունների ցուցակների ամբողջականության ստուգումներ և ըստ անհրաժեշտության կատարել ճշգրտումներ:

10. Համայնքների տնտեսությունների ցուցակների ստուգումից հետո ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության և դրանց տարածքային բաժինների պատասխանատու անձանց հետ միասին անհրաժեշտության դեպքում կազմավանի ձևաթղթերում, համայնքների սխեմատիկ հատակագծերում և տարածքի քարտեզներում կատարել անհրաժեշտ փոփոխություններ և ճշգրտումներ:

11. Կազմավանի **Ձև-1Կ, Ձև-2Կ, Ձև-4Կ և Ձև 5Կ** ձևաթղթերում լրացնել հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների ազգանուն, անուն, հայրանունը:

12. Տնտեսությունների ցուցակների և կազմավանի **Ձև 1Կ, Ձև 2Կ, Ձև 4 Կ և Ձև 5Կ** ձևաթղթերի հիման վրա լրացնել հրահանգիչ-հսկիչների հուշատետրի **1-ին աղյուսակը**:

13. Վերահսկել հրահանգիչ-հսկիչների կողմից կազմավանի հիման վրա հաշվարարների հուշատետրերի **1-ին աղյուսակի** համապատասխան սյունակների լրացումը:

14. Վերահսկել հաշվառման տեղամասի հաշվարարների նախնական շրջագայությանը (2013թ. նոյեմբերի 6-8) դուրս գալուն:

Ուշադրություն՝ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսությունների գյուղատնտեսական նշանակության և/կամ տնամերձ հողերի, գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ տվյալները հաշվարարներին չեն հաղորդվում:

15. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձից ստանալ անհրաժեշտ քանակությամբ հարցաթերթեր, հուշատետրեր, հրահանգներ, անհրաժեշտ այլ փաստաթղթեր և պիտույքներ, և ապահովել դրանց բաշխումն ըստ հրահանգչական տեղամասերի:

16. Լրացնել «Հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրի» 2-րդ աղյուսակի 2-10-րդ սյունակները:

17. Ճշտել փորձնական ԳՀՀ հաշվառման տեղամասի տարածքում գտնվող **խմբային տնտեսությունների** (քրեակատարողական հիմնարկներ, գորամասեր, մանկատներ, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտափորձարարական ստորաբաժանումներ) **և առևտրային կազմակերպությունների** ներառումը կազմալանի համապատասխան ձևաթղթում:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՀՀ ԱՆՑԿԱՑՈՒՄ

18. Փորձնական ԳՀՀ առաջին օրը (2013թ. նոյեմբերի 10-ին) անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հաշվառման տեղամասի բոլոր հաշվարարներն ու հրահանգիչ-հսկիչներն են դուրս եկել աշխատանքի: Որևէ հաշվարարի կամ հրահանգիչ-հսկիչի աշխատանքի դուրս չգալու դեպքում պարզել պատճառը և անհրաժեշտության դեպքում փոխարինել նրան հաշվառման տեղամասի ռեզերվային (պահուստային) հաշվարարով:

19. Պարբերաբար կազմակերպել հրահանգիչ-հսկիչների ու հաշվարարների հավաք և վերլուծել փորձնական ԳՀՀ հարցաթերթի և հաշվառման մյուս փաստաթղթերի լրացման ժամանակ առաջացած դժվարություններն ու ստուգման ժամանակ հայտնաբերված բոլոր անճշտությունները:

20. Սահմանել հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների աշխատանքների ամենօրյա հսկողություն, ձեռնարկել միջոցներ յուրաքանչյուր հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի կողմից փորձնական ԳՀՀ գործընթացն ապահովելու և հուշատետրերում նշված պարտականությունները կատարելու համար:

21. Փորձնական ԳՀՀ ընթացքում ծանոթանալ յուրաքանչյուր հաշվարարի կատարած աշխատանքին և ընտրովի ստուգել նրանց կողմից լրացված փորձնական ԳՀՀ հարցաթերթերը և համապատասխան փաստաթղթերը:

22. Հաշվառման տեղամասի վարիչը և նրա օգնականը փորձնական ԳՀՀ անցկացման օրերին կազմում և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին, սահմանված հաշվետվական ձևով և ժամկետներին, ներկայացնում են **հաղորդագրություններ**՝ փորձնական գյուղատնտեսական հաշվառման անցկացման 20 օրերի, ինչպես նաև վերահսկիչ շրջայցի ընթացքի մասին:

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

23. Փորձնական ԳՀՀ ավարտից հետո՝ **դեկտեմբերի 1-4-ը**, հաշվարարների կողմից հաշվառված տնտեսությունների ամբողջականությունն ու լրացված փաստաթղթերի ճշգրտությունը ստուգելու համար հրահանգիչ-հսկիչների հետ միասին ընտրել յուրաքանչյուր հաշվային տեղամասի տների 10%-ը՝ դրանցում վերահսկիչ շրջայց անցկացնելու համար, և վերահսկել դրա անցկացման ընթացքը:

24. Վերահսկիչ շրջայց անցկացնելու համար տնտեսությունների ընտրանքը կատարվում է ըստ հետևյալ կարգի.

24.1. յուրաքանչյուր հրահանգիչ-հսկիչ իր հրահանգչական տեղամասի հաշվարարների հուշատետրերի աղյուսակում «-»(մինուս) նշանով նշում է կատարում այն տների տողում, որոնցում տնտեսություն չի բնակվել,

24.2. հրահանգիչ-հսկիչները հաշվարարների հուշատետրերը ներկայացնում են հաշվառման տեղամասի վարիչին (օգնականին),

24.3. ընտրանքը պետք է կատարվի միայն ըստ այն տների, որտեղ բնակվում է/են տնտեսություն/տնտեսություններ,

24.4. «-» (մինուս) նշանով չնշված տների թվից, գունավոր մատիտով պետք է ընդգծել և առանձնացնել առանձին տողով գրված յուրաքանչյուր 10-րդ տնտեսությունը և վերահսկիչ շրջագայությունն անցկացնել այդ տնտեսությունում:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՀՀ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ

25. Հրահանգիչ-հսկիչների կողմից վերահսկիչ շրջայցն ավարտելուց հետո, հաշվառման տեղամասի վարիչն ու նրա օգնականը «ՀՀ 2013թ. նոյեմբերի 10-30-ը ներառյալ փորձնական գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստմանը, անցկացմանը, նյութերի մեքենայական մշակմանը և ելքային աղյուսակների ստացմանն ուղղված միջոցառումներով» սահմանված ժամկետում հրահանգիչ-հսկիչներից պետք է ընդունեն ԳՀՀ բոլոր փաստաթղթերը:

Նյութերն ընդունելիս անհրաժեշտ է՝

1) հաշվել փորձնական ԳՀՀ լրացված հարցաթերթերի, հարցաթերթի հավելվածների և ուղեկցող թերթերի (**Ձև թիվ 10**) քանակը և համեմատել

դրանք հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերում (**Ձև թիվ 6**) լրացված տվյալների հետ,

2) ստուգել՝

- հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերում (**Ձև թիվ 6**) հանրագումարների հաշվարկը,
- Ձև թիվ 6-ի տվյալների համապատասխանությունը հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագրի (**Ձև թիվ 7**) տվյալների հետ,
- Ձև թիվ 6 և Ձև թիվ 7 ամփոփ տեղեկագրերի հանրագումարների հաշվարկման ճշգրտությունը,
- ուղեկցող թերթերի (**Ձև թիվ 10**) լրացման ամբողջականությունն ու ճշգրտությունը,

3) համեմատել ամփոփ տեղեկագրերով ստացված հաշվառման հարցաթերթերի քանակի վերաբերյալ տվյալները տնտեսությունների ցուցակներում, գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներում և կազմալանում գրառված տնտեսությունների քանակի տվյալների հետ: Այդ տվյալների միջև էական տարբերություն հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է պարզել պատճառը,

4) ստուգել ամփոփագրերում և ուղեկցող թերթերում յուրաքանչյուր բնակավայրի անվան գրառման ճշգրտությունը,

5) ընտրությամբ ստուգել փորձնական ԳՀՀ հարցաթերթերի և հարցաթերթի հավելվածի լրացման ճշգրտությունն ու ամբողջականությունը,

6) ստուգել հաշվարարների պայուսակներում ուղեկցող թերթերի, փորձնական ԳՀՀ հարցաթերթերի, հարցաթերթի հավելվածների հաջորդական դասավորվածությունը և համապատասխան օժանդակ նյութերի առկայությունը,

7) ընդունել փորձնական ԳՀՀ չօգտագործված և վնասված բոլոր փաստաթղթերը:

26. Հրահանգիչ-հսկիչներից նյութերի ընդունման ավարտից հետո հաշվառման տեղամասի վարիչը և նրա օգնականը լրացնում են հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագիրը (**Ձև թիվ 8**)՝ Ձև թիվ 7- հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագրի տվյալների հիման վրա և կազմում **Ձև թիվ 8-ի հավելվածը**:

27. Հաշվառման տեղամասի վարիչը և նրա օգնականը ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգողների անմիջական մասնակցությամբ ՀՀ ԱՎԾ տարածքային բաժնի պատասխանատու անձին հանձնում են.

1) հրահանգիչ-հսկիչներից ընդունած բոլոր նյութերը, հաշվարարների հանձնած պայուսակները՝ լրացված հարցաթերթերով, հարցաթերթի

հավելվածով, հուշատետրերով, ամփոփ տեղեկագրով և տեղամասի հատակագծով,

2) հրահանգիչ-հսկիչների ամփոփ տեղեկագրերը, հուշատետրերը, հաշվետվությունները,

3) հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրը՝ փորձնական ԳՀՀ կազմակերպման և անցկացման վերաբերյալ իրենց դիտողություններով և առաջարկություններով,

4) հաշվառման տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8 և Ձև թիվ 8-ի հավելվածը),

5) բոլոր օժանդակ նյութերը՝ սխեմատիկ հատակագծեր, տնտեսությունների ցուցակներ, փորձնական ԳՀՀ չօգտագործված և վնասված հարցաթերթեր և հաշվառման այլ փաստաթղթեր՝ լրացնելով սույն հուշատետրի աղյուսակ 2-ի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ սյունակները:

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀՐԱՀԱՆԳԻՉ-ՀՍԿԻՉՆԵՐԻՆ

Նյութերի ցանկը	Ստացված է վիճակագրության տարածքային բաժնից	Հանձնել է		
		1	2	3
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>
1. Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթ				
2. Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի հավելված				
3. «ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթը և դրա հավելվածը լրացնելու կարգի մասին» հրահանգ				
4. Գրություն նրանց, ում դժվար է տանը գտնել				
5. Հուշատետր հաշվարարի				
6. Ամփոփ տեղեկագիր հաշվային տեղամասի				
7. Հուշատետր հրահանգիչ-հսկիչի				
8. Ամփոփ տեղեկագիր հրահանգչական տեղամասի				
9. Ուղեկցող թերթ				
10. Փորձնական գյուղատնտեսական հաշվառման մասնակցի վկայական				
11. Գրենական պիտույքներ				
12. Պայուսակ				
13. Էլեկտրոնային հաշվիչ մեքենա				
14. Հրահանգչական և հաշվային տեղամասի հատակագծեր				

